Հավելված
ՀՀ վարչապետի N 43 - Ա որոշման

«Հավելված N 2
ՀՀ վարչապետի N 1069 - Ա որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

«ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿՈՂՄԵՐԻ 17-ՐԴ (COP17) ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ

1. Սույն աշխատակարգով կանոնակարգվում են «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի կողմերի 17-րդ (այսուհետ՝ COP17) համաժողովի կազմակերպման և անցկացման կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) աշխատանքների կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

2. Կոմիտեն միջգերատեսչական համակարգող մարմին է, որն իր գործունեության իրականացման ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, միջազգային պայմանագրերով, իրավական այլ ակտերով և սույն աշխատակարգով:

3. Կոմիտեն կարող է քննարկել COP17 համաժողովի հետ կապված ցանկացած կազմակերպական և բովանդակային հարց:

4. Կոմիտեն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի (այդ թվում՝ հեռավար կարգով անցկացվող) և շրջաբերական գրությունների միջոցով:

5. Շրջաբերական գրությունների շարժը կազմակերպվում է կոմիտեի նախագահի նախաձեռնությամբ:

6. Կոմիտեի հերթական նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան 30 աշխատանքային օրը մեկ: Կոմիտեի արտահերթ նիստերն անցկացվում են կոմիտեի նախագահի նախաձեռնությամբ կամ կոմիտեի անդամների առնվազն 1/3-ի առաջարկությամբ:

7. Կոմիտեի նիստերին, անհրաժեշտության դեպքում, կոմիտեի նախագահի կողմից կարող են հրավիրվել համապատասխան մասնագետներ և փորձագետներ և այլ ներկայացուցիչներ: Կոմիտեի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են կոմիտեի անդամների կեսից ավելին:

8. Կոմիտեի աշխատանքները կազմակերպում է կոմիտեի նախագահը, որը՝

1) ղեկավարում է կոմիտեի գործունեությունը.

2) հրավիրում, վարում և նախագահում է կոմիտեի նիստերը կամ իր բացակայության դեպքում կոմիտեի նախագահի լիազորությունների կատարումն իր հայեցողությամբ հանձնարարում է կոմիտեի անդամ շրջակա միջավայրի նախարարի տեղակալներից մեկին, որը կոմիտեի նախագահի լիազորություններն իրականացնում է ամբողջ ծավալով.

3) նշանակում է կոմիտեի նիստի անցկացման վայրը, տարին, ամիսը և ամսաթիվը, նիստն սկսելու ժամը, ինչպես նաև կոմիտեի հաստատմանն է ներկայացնում օրակարգը.

4) հաստատում է կոմիտեի անդամին փոխարինող անձի թեկնածությունը.

5) ամփոփում է կոմիտեի նիստերի օրակարգում ընդգրկվող հարցերի առաջարկները.

6) որոշում է ընդունում նիստերի աշխատանքներին այլ անձանց, փորձագետների, մասնագետների ներգրավելու մասին:

9. Կոմիտեի քարտուղարության իրավասությունները վերապահվում են Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությանը: Նիստերի քարտուղարին նշանակում և փոփոխում է կոմիտեի նախագահը: Կոմիտեի քարտուղարը՝

1) նախապատրաստում է հանձնաժողովի հերթական նիստի օրակարգը, նիստի օրակարգին վերաբերող համապատասխան նյութերը և նիստի կայացման օրվանից 5 աշխատանքային օր առաջ էլեկտրոնային փոստով դրանք տրամադրում է կոմիտեի նախագահին և անդամներին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նիստին հրավիրված անձանց.

2) նախապատրաստում է աշխատանքային խմբի հերթական նիստի քննարկմանը ներկայացվող հարցերը, կազմում և վարում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները:

10. Կոմիտեի նիստերի փաստաթղթերի և արձանագրությունների բնօրինակները պահվում են շրջակա միջավայրի նախարարությունում:

11. Կոմիտեի նիստի օրակարգը ձևավորում է կոմիտեի նախագահը: Կոմիտեի անդամները կարող են առաջարկություններ ներկայացնել (այդ թվում՝ նիստի ընթացքում) նիստի օրակարգում ընդգրկելու նպատակով:

12. Կոմիտեի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ նիստին ներկա կոմիտեի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում կոմիտեի նախագահի ձայնը վճռորոշ է: Եթե կոմիտեի որոշման վերաբերյալ որևէ անդամ ունի հատուկ կարծիք, ապա այն գրավոր կցվում է կոմիտեի նիստի արձանագրությանը և հանդիսանում է վերջինիս անբաժանելի մասը: Կոմիտեի որոշումների բովանդակությունն արտացոլվում է արձանագրությունում:

13. Կոմիտեի նիստերն արձանագրվում և ձայնագրվում են: Կոմիտեի նիստերն արձանագրում է քարտուղարը, իսկ նրա բացակայության դեպքում՝ կոմիտեի նախագահի կողմից նշված անձը:

14. Կոմիտեի նիստերի արձանագրություններն ստորագրում են կոմիտեի նախագահը, քարտուղարը և նիստին ներկա անդամները և ոչ ուշ, քան ստորագրման օրվան հաջորդող աշխատանքային օրն էլեկտրոնային եղանակով ուղարկում են կոմիտեի անդամներին:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

21.01.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ